ԱՐՄԻՆԻԱՅԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Հայաստանի VIII—IX դդ. պատմության ուսումնասիրման համար առաջնակարգ նշանակություն ունի արաբական խալիֆայության նահանգ Արմինիայի (որն ընդգրկում էր բուն Հայաստանը, Վիրքը, Աղվանքը, Մերձկասպյան շրջանները և Դերբենդը) կառավարիչների՝ ոստիկանների ժամանակագրության ճշտումը, որը քանիցս կատարվել է մատենագրական տվյալների և մանավանդ դրամագիտական նյութերի հիման վրա[1]։

Արմինիայի ոստիկանների ցուցակը կազմելու նախնական փորձեր են կատարվել դեռ անցյալ դարի առաջին կեսին (Ժ. Սեն-Մարտեն[2] և Յ. Պետերման)[3], սակայն դրանք խիստ թերի են եղել և դրանց հեղինակները Հայոց իշխանին և Արմինիայի ոստիկանին[4] շփոթել են։

Ժամանակագրություն կազմելու առաջին լուրջ փորձը կատարել է արաբագետ-հայագետ Մ. Ղազարյանը, իր ցուցակում ընդգրկելով միայն ոստիկաններին[5]։ Ֆրանսիացի հայագետ Ժ. Լորանը այս ցուցակն ավելի հարստացրեց[6], սակայն թե՛ նա, թե՛ իր նախորդը հիմնական ուշադրությունը նվիրել էին մատենագրական տվյալներին (հայ և արաբ պատմիչների)։

Ժամանակի ընթացքում կուտակված դրամագիտական նյութը հնարավորություն էր տալիս մեծ լրացումներ ու ճշտումներ կատարելու Արմինիայի ոստիկանների ժամանակագրության մեջ, և ահա արևելագետ-դրամագետ Ռ. Ֆասմերը[7] կազմեց Աբբասյան շրջանի Արմինիայի ոստիկանների բավական հարուստ ցուցակը, որից հետո նոր ճշտումներով ցուցակը լրացրեց արաբագետ Հ. Նալբանդյանը[8]։

Վերջին տարիներին կուտակված նոր հարուստ դրամագիտական նյութը բնականաբար պիտի մղեր վերանայելու հին ցուցակները, քանի որ նորանոր

---

[1] *Օմայան շրջանի ոստիկանների ժամանակագրության հիմքը մատենագրական տվյալներն են, իսկ Աբբասյան շրջանի համար մեծ նշանակություն ունեն դրամները։*

[2] J. Saint Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818, t. I, *էջ 415—418։*

[3] J. H. Petermann, De Ostikanis arabicis Armeniae gubernatoribus, Berolini, 1840.

[4] *Մի հակիրճ ցուցակ ունի նաև Է. Ցամբաուրը՝* E. de Zambaur, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de l'Islam, Hannover, 1927 (1955), *էջ 178—179։*

[5] M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, *էջ 38—43։*

[6] J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, *էջ 336—347։*

[7] R. Vasmer, Chronologie der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, Wien, 1931.

[8] *Հ. Նալբանդյան, Արարացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1956, № 8, էջ 105—124։*

անուններ են հանդես գալիս։ Դրամագիտական նոր նյութեր ի հայտ բերելու և գիտական շրջանառության մեջ դնելու գործում շնորհակալ աշխատանք է կատարել գրամագետ Խ. Մուշեղյանը[9]։ Նա իր արժեքավոր աշխատություններում տվել է այն ամբողջ նոր նյութը[10], որ մինչ այժմ ի հայտ է բերվել։ Այդ նյութի հիման վրա անհրաժեշտ համարեցինք կրկին վերանայել Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը։

Արմինիայի ոստիկանների գոյություն ունեցող բոլոր ցուցակներում ոստիկանները շփոթված են խալիֆայության Հյուսիսային երկրամասի (Արմինիա, Ատրպատական, Ջազիրա՝ Վերին Միջագետք, ինչպես նաև սահմանային գոտի) փոխարքաների հետ։ Բանն այն է, որ հատուկ դեպքերում, երբ Արմինիայում կամ Ջազիրայում տեղական ոստիկան չէր լինում, փոխարքան էր անմիջականորեն կառավարում նահանգը։ Ուստի դժվար է փոխարքաներին առանձնացնել հատուկ ցուցակով, բայց միաժամանակ անհրաժեշտ է նրանց տարբերել հասարակ ոստիկաններից։ Այս նպատակով հարմար գտանք փոխարքաների անունները գրել գլխատառերով։

Ցուցակում փոխարքաների ու ոստիկանների անունները տրված են ընդհանուր համարակալությամբ։ Ինչ վերաբերում է ոստիկանների տեղականներին, ապա նրանց անունները համարակալված չեն, իսկ անորոշ կամ գավառական պաշտոն ունեցող անձնավորությունները (որոնց անունները գավառական փողերանոցների գրամների վրա են հիշված) տրված են փակագծերի մեջ։

Ժամանակագրության մեջ կրճատ ձևով օգտագործել և հիշել ենք հետևյալ աշխատությունները.

Ղևոնդ—*Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց*, Ս. Պետերբուրգ, 1887։

Մովսես Կաղանկատվացի—*Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Մոսկվա, 1860։

Թովմա—*Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Ս. Պետերբուրգ, 1887։

Յովհ. կաթ.—*Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի*, Երուսաղեմ, 1867։

Ասողիկ—*Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական*, Ս. Պետերբուրգ, 1885։

Սամուել Անեցի—*Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893։

Beladsori—Liber expugnationis regionum auctore al-Beladsori, ed. M. J. de Goeje Lugduni Batavorum, 1866.

Yaqubi—Yaqubi, Tarikh, Beyrouth, I—II, 1960.

Tabari—Tarikh at-Tabari, Le Caire, I—X, 1960—1969.

Ibn al-Athir—Ibn al-Athir, al-Kamil fi-t-tarikh, Qahira, 1938.

Ibn Taghribirdi—Ibn Taghribirdi, an-Nudjum az-Zahira fi muluk Misr w al-Qahira I—12, Qahira, 1929—1956.

---

[9] Х. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962 և հատկապես՝ Խ. Մուշեղյան, Արբասյան դրամների թողարկումը խալիֆաթի Արմինիա նահանգում VIII—IX դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 4, էջ 143—156 և հավելված։ Այս աշխատության մեջ ցանկացած ոստիկանի անունը կարելի է գտնել ըստ դրամի հիշրի թվականի։

[10] Արմինիայի դրամների մասին տե՛ս նաև՝ Պ. Սապաղյան, Հայ-արաբական դրամագիտության մեկ քանի հարցերու շուրջը, «Հայկազյան հայագիտական հանդես», 6, Բեյրութ, 1974, էջ 161—181։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆ (ՄԱՐՎԱՆ, 693—709)—Չևականորեն փոխարքա էր 693 թ.։ Ըստ Իբն ալ-Ասիրի նշանակվեց 73 հ. թ.[11] (692—693). Ibn al-Athir, IV, 28։ Նա իրականացրեց Հայաստանի և հարակից երկրների նվաճումը։ Ըստ էության կանոնավոր կերպով իշխել սկսեց 701 թ.[12]։ Հիշվում է մինչև 91 հ. թ. (709—710). Ibn al-Athir, IV, 119։

2. Աբդալլահ—Հիշվում է հայկական աղբյուրներում. Յովհ. Կաթ., 120, Ասողիկ, 101։

3. Աբու Նայլ իբն Աբդալլահ (701—703)—Նշանակվեց 82 հ. թ. (701—702). Ibn al-Athir, IV, 84։ Նրան սպանեցին հայերը 703 թ. ապստամբության ժամանակ։ Հավանաբար սա և նախորդը նույն անձնավորությունն է։

4. Օսման իբն ալ-Վալիդ իբն Ուկբա իբն Աբի Մուայթ (معيط, 704)—Սրան նշանակել էր Աբդ ալ-Մալիք խալիֆան. Beladsori, 205։

5. Կասիմ (705)—Հայտնի չէ, սա ոստիկա՞ն էր, թե ինչ-որ բարձրաստիճան պաշտոնյա։ Նա էր Նախճավանի և Խրամի եկեղեցիներում ողջակեզ արել հայ նախարարներին. Ղևոնդ, 32։

6. Աբդ ալ-Ազիզ իբն Հատիմ ալ-Բահիլի (705—709)—Ըստ Իբն Տաղրիբիրդիի նշանակվել է 85 հ. թ. (704). Ibn Taghribirdi, Ա, 209, սակայն ավելի հավանական է 705 թ.։ Վերաշինեց արաբների կողմից ավերված Դվինը։ Նրա ջանքերի շնորհիվ Հայաստան վերադարձան Հայոց իշխան Սմբատ Բագրատունին և այլ նախարարներ. Ղևոնդ, 35, Ասողիկ, 125։

7. ՄԱՍԼԱՄԱ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔ (709—722)—Նշանակվեց 91 հ. թ. (709—710) և նշանավոր դարձավ Բյուզանդիայի և խազարների դեմ մղած կռիվներով. Ibn al-Athir, IV, 119։

8. Ադի իբն Ադի իբն Ամիրա (կամ Ումայրա՝ عمير) ալ-Քինդի (715—717)—Նրան նշանակեց Սուլայման խալիֆան. Beladsori, 205։

9. Վալիդ (717)—Նրան հիշում է Հովհաննես Դրասխանակերտցին, որպես Վլիթ ոստիկան. Յովհ. կաթ., 130։ Ըստ Հ. Նալբանդյանի սա փոխկառավարիչ էր։

10. Օմար իբն Աբդ ալ-Ազիզ (717—720)—ենթադրվում է, որ նա ոստիկան էր 99 հ. թ. (717—718). Beladsori, 205, Ibn Taghribirdi, Ա, 239, Նալբանդյան, Ն 10։

11. Օմար իբն Հուբայրա (720—721)—Եղել է Չորրորդ Հայքում հույների դեմ կռվող արաբ զորքի հրամանատար 102 հ. թ. (720—721). Yaqubi, II, 314, Tabari, VI, 616։ Հ. Նալբանդյանը սրան ոստիկան է համարում։

12. Միլակ (معلق) իբն Սաֆֆար ալ-Բահրանի (721)—Ըստ Բալազարու սա շատ կարճ իշխեց. Beladsori, 206։

13. ՋԱՌԱՀ ԻԲՆ ԱԲԴԱԼԼԱՀ ԱԼ-ՀԱՔԱՄԻ (722—725)—Արմինիայի և Ատրպատականի փոխարքա դառնալով պայքար սկսեց խազարների դեմ։

---

[11] Հ. թ.—հիջրի թվական։ Կողքին փակագծերի մեջ տալիս ենք քրիստոնեական թվականը։

[12] Արաբ պատմագրությունը հիշում է նաև մի քանի ոստիկանների VII դարում։ Սակայն դրանք սոսկ ձևականորեն ունեին այդ պաշտոնը, քանի որ Հայաստանն այդ ժամանակ կիսանկախ երկիր էր։ Արաբները Հայաստանը նվաճեցին միայն 701 թ., տե՛ս J. Laurent, L'Arménie, էջ 337—338։

Նշանակվել էր 104 հ. թ. (722—723). Tabari, VII, 14, Ibn al-Athir, IV, 186։

14. Հարիս իբն Ամրու ալ-Թաի (724—725)—Յազիդ (Եզիդ) խալիֆայի նշանակած վերջին ոստիկանն էր Արմինիայում. Beladsori, 206։ Ըստ Կաղանկատվացու Հերթը (Հարիսը) նշանակվեց հայոց 174 թ. ձմռանը (725) և անցկացրեց հայտնի աշխարհագիրը. Մովսես Կաղանկատվացի, 258, Ղևոնդ, 100։

15. ՄԱՍԼԱՄԱ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔ (725—729)—Նշանակվեց Հիշամ խալիֆայի կողմից 107 հ. թ. (725—726). Yaqubi, II, 317։

16. ՋԱՌԱՀ ԻԲՆ ԱԲԴԱԼԼԱՀ ԱԼ-ՀԱՔԱՄԻ (729—730)— Նշանակվեց 111 հ. թ. (729—730). Tabari, VII, 67։ Սպանվեց 112 հ. թ. (730—731). Tabari, VII, 70։

17. Հաջջաջ իբն Աբդալլահ ալ-Հաքամի (730)—Փոխարինեց իր սպանված եղբորը որպես Արմինիայի ոստիկան. Tabari, VII, 70։

18. Սաիդ իբն Ամրու ալ-Հարաշի (730—731)—Նշանակվեց 112 հ. թ. (730—731). Tabari, VII, 70։

19. ՄԱՍԼԱՄԱ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔ (731—732)—Նշանակվեց նույն 112 հ. թ. Tabari, VII, 71։

20. ՄԱՐՈՒԱՆ (ՄԵՎԱՆ) ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴ (732—744)—Որդին էր առաջին փոխարքա Մուհամմադ իբն Մարուանի։ Նշանակվեց 114 հ. թ. (732—733). Tabari, VII, 90։ Հայոց իշխան կարգեց Աշոտ Բագրատունուն. Ղևոնդ, 112։ Հաղթեց խազարներին։ Հայաստանից հեռացավ 126 հ. թ. (743—744). Tabari, VII, 238։

21. Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ (Եզիդ) ալ-Հիլալի (744)—Նշանակվեց հենց 126 հ. թ. (743—744). Yaqubi, II, 336։ Նույն տարում սպանվեց։

22. Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլի (العقيلي, 745)—Ըստ Թաբարիի գտնվել է Հայաստանում մինչև 132 հ. թ. (749—750). Tabari, VII, 447։ Հիշվում է Արմինիա մակագրությամբ անթվական մի դրամի վրա։ Սրա օրոք ծագեց 747—750 թթ. ապստամբությունը Հայաստանում։

23. Մուսաֆիր իբն Քասիր (Քուսայր՝ كثير, 745—750)—Սա գրավեց իշխանությունը և 747—750 թթ. ապստամբության ժամանակ կռվում էր Իսհակի դեմ։ Նրան սպանեց Մուհամմադ իբն Սուլը 133 հ. թ. (750—751). Yaqubi, II, 357—358։

24. Մուհամմադ իբն Սուլ (750)—Նրան նշանակեց առաջին Աբբասյան խալիֆա Աբու-լ-Աբբասը 133 հ. թ. (750—751), հաղթեց Մուսաֆիրին և սպանեց նրան. Yaqubi, II, 357—358։

25. ԱԲՈՒ ՋԱՖԱՐ (750—754)—Նշանակվեց հյուսիսային նահանգների փոխարքա իր եղբոր՝ Աբու-լ-Աբբասի կողմից 132 հ. թ. (749—750). Tabari, VII, 458։ Ըստ Յակուբիի նա նշանակվեց մի քիչ ավելի ուշ՝ 134 հ. թ. (751—752)։ Համենայն դեպս փոխարքա մնաց մինչև իր խալիֆա դառնալը։ Հայ պատմիչները նրան կոչում են «միւս Աբդլլայ», Ասողիկ, 132։

26. Աբդալլահ իբն Մուհամմադ (750)—Նրան ոստիկան նշանակեց Աբու Ջաֆարը 132 հ. թ. (749—750). Tabari, VII, 458։

27. Սալիհ իբն Սուբայհ (صبيح) ալ-Քինդի (751)—Ոստիկան նշանակվեց 133 հ. թ. (750—751). Tabari, VII, 460։ Պաշտոնից հեռացվեց 134 հ. թ. (751—752). Tabari, VII, 465։ Ղևոնդը նրան կոչում է Սալեհ. Ղևոնդ, 133։

28. Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի (752—754)—Նշանակվեց 134 հ. թ. (751—752). Yaqubi, II, 358, Tabari, VII, 465։ Ղևոնդի մոտ կոչվում է Եզիդ որդի Ուսադի։ Նրա մայրն էր Սիսականի պատրիկի դուստրը. Beladsori, 205։ Նա Հայոց իշխան նշանակեց Սահակ (Իսահակ) Բագրատունուն, Ղևոնդ, 128։

29. Հասան իբն Կահթաբա ալ-Թաի (754—759)—Ոստիկան դարձավ 137 հ. թ. (754—755), Tabari, VII, 479—480։

30. ՄԱՀԴԻ* (760—775)—Այս փոխարքան հիշվում է դրամների վրա. Առան 148 (765—766), Արմինիա 151 (768), ալ-Բաբ 154 (770—771), Արմինիա 155 (771—772)։

31. Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի (759—769)—Հիշվում է դրամների վրա. Բարդաա 142 (759—760), 143 (760—761)։ Հարկերն այնքան ծանրացրեց, որ Հայոց իշխան Սահակ Բագրատունին բողոքեց խալիֆային. Ղևոնդ, 136։

32. Բաքքար իբն Մուսլիմ ալ-Ուկայլի (769—771)—Մանսուր խալիֆան սրան նշանակեց նախորդի փոխարեն։ Ղևոնդը նրան կոչում է «Բագար որդի Մսլիմայ». Ղևոնդ, 136։ Հիշվում է դրամների վրա. Արմինիա 152 (769), 153 (770), Առան 152, 153, ալ-Բաբ, 153։ Այս բոլոր դրամների վրա հիշվում է Մահդի փոխարքայի հետ։

33. Հասան իբն Կահթաբա (771—775)—Հիշվում է դրամների վրա. 154 (770—771), Առան 154, Արմինիա (771—772), Առան, 155։ Բոլորի վրա հիշվում է Մահդի փոխարքայի հետ։ Հիշված է նաև առանձին՝ Բարդաա, 158 (774—775)։ Նրա օրոք ծագեց 774—775 թթ. մեծ ապստամբությունը Հայաստանում Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ. Ղևոնդ, 137—152։

34. Վաղիհ ալ-Աբբասի (775)—Մանսուր խալիֆայի օրոք նշանակված վերջին ոստիկանն էր և շատ կարճ ժամանակ իշխեց. Yaqubi, II, 372։ Սա Յակուբի պատմիչի պապն էր։

35. Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի (775—780)—Հիշվում է դրամների վրա. Դաբիլ 159 (775—776), Բարդաա 159, ալ-Բաբ 159, Բարդաա 163 (779—780)։

36. ՀԱՐՈՒՆ (780—786)—Հիշվում է դրամների վրա. Հարունաբադ-Արմինիա 168 (784—785), Հարունիյյա 170 (786—787)։ Ըստ Թաբարիի փոխարքա դարձավ 163 հ. թ. (779—780). Tabari, VIII, 148։

37. Յահիա իբն Խալիդ ալ-Բարմակի (780—783)—Ըստ Թաբարիի Հարունը նրան նշանակել էր քարտուղար. Tabari, VIII, 148։ Հ. Նալբանդյանն նրան ոստիկան է համարում, սակայն պարզ չէ։

38. Նուսայր* (783)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 167 (783—784)։

39. Օսման իբն Ումարա (عمارة) իբն Խուրայմ (783—785)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 167 (783—784), 168 (784—785), Առան 168։ Նրա օրոք էր, որ Տաճատ Անձևացին դարձավ Հայոց իշխան. Ղևոնդ, 159, Beladsori, 210։

---

* Այն անձնավորությունները, որոնց անունները ցուցակում մեր կողմից են ավելացված, աստղանիշ են կրում։

40. Ռաուհ իբն Հաթիմ ալ-Մուհալլաբի (785—786)—Հիշվում է դրամի վրա. Առան 169 (785—786)։ Նրա նշանակումից անմիջապես հետո մեռավ (Եւ ընդ զալն Ռոհայ վախճանեցաւ) Մահդի խալիֆան (22 մուհառամ 169, այսինքն 4 օգոստոսի 785). Ղևոնդ, 161, Beladsori, 210։

(Հասան)*—Հիշվում է դրամների վրա. Հարունաբադ-Արմինիա 168 (784—785), 169 (785—786), Հարուն փոխարքայի անվան հետ։

41. Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմի (786—787)—Հիշվում է դրամների վրա. Հարունիյյա 169 (785—786, Հարունի հետ), Հարունաբադ 169։ Նրան նշանակեց Հարունը հենց որ դարձավ խալիֆա և սա իշխեց մեկ տարի երկու ամիս. Yaqubi, II, 426։ Ըստ Ղևոնդի նա ոստիկան էր դեռ Մուսա ալ-Հադի խալիֆայի օրոք։ Խոսելով Համազասպ Արծրունու նահատակության մասին, Ղևոնդն ասում է. «Գործեցաւ այս յիշխանութեանն Մուսէի, յաղգապետութեանն Խազմայ, յաւուրս սուրբ յայտնութեանն Տեառն, յորում էր Թուականս Հայոց ՄԼԳ» (այսինքն՝ 784 թ.). Ղևոնդ, 165։ Հավանաբար այդ ժամանակ Խուզայման տեղակալ էր։

42. Յուսուֆ[13] իբն Ռաշիդ (راشد) ալ-Սուլամի (787)—Հիշվում է դրամի վրա. Հարունիյյա 170 (786—787)։ Նշանակվեց Խուզայմայից հետո և կազմակերպեց արաբական ցեղերի գաղթը հարավ-արևմտյան Հայաստան. Yaqubi, II, 426։

43. Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի (787—788)—Հիշվում է դրամների վրա. Հարունիյյա 169 (785—786), 170 (786—787)։ Հանվել է 172 հ. թ. (788—789)։ Ղևոնդը նրան կոչում է Եզիտ որդի Մզդեի. Ղևոնդ, 166։

(Իբրահիմ Ջարիր*)—Հիշվում է դրամների վրա. Հարունիյյա 170 (786—787, Հարունի հետ միասին), Հարունիյյա 170։

44. ՈՒԲԱՅԴԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼ-ՄԱՀԴԻ (788—791)—Հիշվում է դրամների վրա. Առան 172 (788—789), Արմինիա 174 (790—791)։ Նշանակվեց 172 հ. թ. Tabari, VIII, 236։ Ղևոնդը հիշում է, որ Հարունի (Ահարոն) Ովբեդլա եղբայրն ստացավ «զԱտրպատական և զՀայս հանդերձ Վրօք և Աղուանիւք». Ղևոնդ, 166։

45. Սուլայման (788—790)—Նրան նշանակեց Ուբայդալլահը և հաստատեց Պարտավում. Ղևոնդ, 166։ Նրա օրոք մեռավ Եսայի կաթողիկոսը (788)։

(Դուկլա)*—Հիշվում է դրամի վրա (Ուբայդալլահի հետ). Արմինիա 174 (790—791)։ Գուցե Ղևոնդի հիշած իբն Դոկեն է. Ղևոնդ, 167։

46. Նասր իբն ալ-Ջաֆֆ* (791)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 174 (790—791, Ուբայդալլահի հետ)։

47. Աբդ ալ-Քաբիր իբն Աբդ ալ-Համիդ ալ-Աղավի (العدوى, 791)—Նշանակվել է Հարուն խալիֆայի կողմից և իշխել միայն չորս ամիս. Yaqubi, II, 426։

48. ՅԱԶԻԴ ԻԲՆ ՅԱՀԻԱ ԻԲՆ ԽԱԼԻԴ ԱԼ-ԲԱՐՄԱՔԻ (792—795)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 175 (791—792), Առան 175, Արմինիա 176 (792—

---

[13] Ենթադրվում է, որ այս Յուսուֆին է վերաբերում Հարունիյյա 170 (786—787) և 171 (787—788) դրամների վրա գտնվող رجاح بو մակագրությունը, ենթադրելով, որ بو պետք է լինի يوسف (Յուսուֆ)-ի կրճատ ձևը (Պ. Սապպաղյան, Հայ-արաբական դրամագիտության մեկ բանի հարցերու շուրջը, էջ 176)։

793), 177 (793—794)։ Ըստ Թաբարիի նշանակվեց Արմինիայի, Ատրպատականի, Ջիբալի, Թաբարիստանի և այլ նահանգների փոխարքա 176 հ. թ. (792—793). Tabari, VIII, 242։

49. Սմար իբն Այյուբ ալ-Քինանի (792—793)—Նրան ոստիկան նշանակեց Ֆադլը. Yaqubi, II, 426։

50. Աբու-լ-Սաբահ և Սահլ իբն Մուհամմադ ալ-Հառանի ալ-Լահբի (793)—Միասին են նշանակվել, ընդ որում առաջինը Արմինիայի հարկային գործերով, իսկ երկրորդը՝ ռազմական. Yaqubi, II, 426։

51. Խալիդ իբն Յազիդ (Եզիդ) իբն Ուսայդ ալ-Սուլամի (794)—Հիշվում է դրամի վրա. Առան 177 (793—794)։ Նրան նշանակել էր Ֆադլը. Yaqubi, II, 426։

52. ալ-Աբբաս իբն Ջաբիր իբն Յազիդ (Եզիդ) իբն Ջաբիր իբն Արդալլահ ալ-Բաջալի (794)—Նրան նշանակեց Ռաշիդը Խալիդից հետո. Yaqubi, II, 426։

53. Մուսա իբն Իսա ալ-Հաշիմի (794—795)—Հիշվում է դրամի վրա. Առան 178 (794—795)։ Մնաց միայն մեկ տարի. Yaqubi, II, 427։

54. Յահիա ալ-Հարաշի (795—796)—Հիշվում է դրամների վրա. ալ-Բաբ 178 (794—795), Արմինիա 179 (795—796)։

55. ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ԱՄԻՆ* (796—809)—Հիշվում է միայն դրամների վրա. Արմինիա 179 (795—796)—183 (799—800), 185 (801), 186 (802), 188 (803—804)—192 (807—808), Մադան Բաջունայս 190 (805—806)—193 (808—809)։

56. Ահմադ իբն Յազիդ (Եզիդ) իբն Ուսայդ ալ-Սուլամի (796—797)—Նշանակեց Ռաշիդը, սակայն նրա դեմ ապստամբեցին արաբական զորամասերը և նա հանվեց. Yaqubi, II, 427։

57. Սահլ իբն Սալմ իբն Կուտայբա (قتيبة) ալ-Բահիլի (798—799)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 181 (797—798), 182 (798—799), Դաբիլ 182, դեռ ոստիկան էր 182 հ. թ. Tabari, VIII, 269։

58. Նասր իբն Հաբիբ ալ-Մուհալլաբի (799)—Նրան նշանակեց Հարուն ալ-Ռաշիդը, սակայն շուտով հեռացվեց. Yaqubi, II, 428։

59. Ալի իբն Իսա իբն Մահան (799)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 183 (799—800)։ Նրան նշանակեց Ռաշիդը. Yaqubi, II, 428։

60. Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի (799—801)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 183 (799—800), Առան 183, 184 (800), Արմինիա 185 (801)։

(Ահմադ իբն Մազիադ)—Հիշվում է դրամի վրա. Առան 184 (800)։

61. Ասադ իբն Յազիդ իբն Մազիադ (801—802)—Հիշվում է դրամների վրա. Առան 184 (800), Դաբիլ 185 (801), Արմինիա 185, Առան 185, Արմինիա 186 (802), Առան 186։ Ըստ Թաբարիի հաջորդեց Պարտավում մեռած հորը՝ Յազիդին 185 հ. թ. Tabari, VIII, 273։

62. Մուհամմադ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի (802—803)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 186 (802), Առան 186, Արմինիա 187 (802—803), Դաբիլ 187, Առան 187։

63. Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմի (803—806)—Դրամների վրա հիշվում է 187 (802—803) մինչև 191 (806—807) թթ.։ Նրա հետ դրամների վրա հիշվում են հետևյալ տեղակալները. ալ-Կասիմ, Դաբիլ 187. Բիշր իբն Խուզայմա, Արմինիա 189 (804—805), Առան 189, իսկ Դաբիլ 189 դրամի վրա սա

է հիշվում, ոմն Հիշամի հետ. ալ-Հայսամ, Արմինիա 189, 190 (805—806). Իսմաիլ իբն Իբրահիմ, Արմինիա 190, 191 (806—807). Նաիմ իբն Բաշշար, Արմինիա 191։

Հավանաբար Խուզայմայի օրոք էր, որ Աշոտ Մսակեր Բագրատունին ճանաչվեց Հայոց իշխան. Սամուել Անեցի 91։

(Դաուդ)*—Հիշվում է դրամների վրա. Մադան Բաջունայս 191 (806—807), 192 (807—808), 194 (809—810)։ Վերջինի վրա հիշվում է՝ Դաուդ Սարադ (صرد).

64. Սուլայման իբն Յազիդ (Եզիդ) իբն ալ-Ասամ ալ-Ամիրի (العامری, 806—807)—Հիշվում է դրամի վրա. Առան 192 (807—808)։ Յակուբին նրան կոչում է հիմար ծերունի. Yaqubi, II, 428։

65. Այյուբ իբն Սուլայման* (807)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 192 (807—808), Առան 193 (808—809)։

66. ալ-Աբբաս իբն Զուֆար ալ-Հիլալի (807)—Հիշվում է դրամի վրա. Առան 193։ Կռվեց ծանարների դեմ. Yaqubi, II, 428։

67. Յահիա իբն Զուֆար (808)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 193։

68. Աբդալլահ իբն Մուհամմադ* (809)—Հիշվում է դրամի վրա. Դաբիլ 194 (809—810)։

(Ուբայդ)*—Հիշվում է դրամի վրա. Մադան Բաջունայս 194։

69. Մուհամմադ իբն Զուհայր իբն-Մուսայյիբ ալ-Դաբբի (الضبی, 809)—Հարուն ալ-Ռաշիդի նշանակած վերջին ոստիկանն էր. Yaqubi, II, 428։

70. Ասադ իբն Յազիդ իբն Մազիադ (809—811)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 194 (809—810), 195 (810—811), Առան 195։ Նրան նշանակել էր Ամինը. Yaqubi, II, 435։

(Մասրուր)*—Հիշված է դրամի վրա. Մադան Բաջունայս 195 (810—811)։

71. Ահմադ իբն Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի* (811)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 195 (810—811)։

72. Իսհակ իբն Սուլայման ալ-Հաշիմի (811—813)—Հիշվում է դրամի վրա. Առան 196 (811—812)։ Նա իր փոխարեն Հայաստան ուղարկեց որդուն՝ Ֆադլին. Yaqubi, II, 435։

73. Ֆադլ (811—813)—Փաստական կառավարիչ էր մինչև Ամին խալիֆայի իշխանության վերջը։ Սրա օրոք Հայաստանում ապստամբեց Ջահհաֆը. Yaqubi, II, 435։

74. Աբդ ալ-Մալիք իբն ալ-Ջահհաֆ—Հիշվում է դրամի վրա. Մադան Բաջունայս 196 (811—812)։ Հավանարար կարճ ժամանակ է իշխել որպես բռնացող (մուտաղալլիբ). Yaqubi, II, 445։

75. Թահիր իբն Մուհամմադ ալ-Սանանի (813)—Հիշվում է դրամների վրա. Առան 196 (811—812), 197 (812—813)։ Մամունը նրան նշանակել էր Արմինիայի և Ատրպատականի կառավարիչ. Yaqubi, II, 461։

76. Սուլայման իբն Ահմադ իբն Սուլայման ալ-Հաշիմի (813)—Հիշվում է դրամի վրա. Առան 197 (812—813), ուր կոչվում է ذو الرياستين (երկպաշտոնավոր), այսինքն թե՛ ռազմական, թե՛ հարկային գործերով կառավարիչ։ Շատ կարճ իշխեց. Yaqubi, II, 462։

77. ալ-Աբբաս իբն Զուֆար ալ-Հիլալի (813)—Հիշվում է դրամի վրա. Առան 197 (812—813). Vasmer, 57—58։

78. Աբու Աբդալլահ (814)—Հիշվում է դրամի վրա. Առան 198 (813—814). Vasmer, 58։

79. Հատիմ իբն Հարսամա իբն Այան (عيّن, 815—818)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 202 (817—818), 203 (818—819)։ Կարճ ժամանակ մնալուց հետո, երբ լսեց իր հոր սպանությունը, ապստամբեց ու միացավ Բաբեկին. Yaqubi, II, 462։

80. Յահիա իբն Մուաղ (معاذ) իբն Մուսլիմ (818—819)—Չկարողացավ պայքարել ապստամբների դեմ. Yaqubi, II, 462։

81. Ահմադ իբն Յահիա* (819—820)—Հիշվում է դրամների վրա հետևյալների հետ. ալ-Հուսայն իբն Սադ*, Արմինիա 204 (819—820), ալ-Բահս իբն Հալբասի*, Արմինիա, 204, Առան 204։

(Իբրահիմ իբն Դաուդ)*—Հիշվում է դրամի վրա. Մադան Բաջունայս 204 (819—820)։

(ալ-Աբբաս իբն Աբի Այյուբ)*—Հիշվում է դրամների վրա. Մադան Բաջունայս 205 (820—821), 206 (821—822)։

(ալ-Աբբաս Յակուբ)*—Հիշվում է դրամի վրա. Մադան Բաջունայս 206 (821—822)։

82. Իսա իբն Մուհամմադ իբն Աբի Խալիդ ալ-Մամունի (820—823)—Հիշվում է դրամի վրա. Մադինատ Առան 207 (822—823). իսկ այլ դրամների վրա նրա հետ հիշվում են՝ Մուհամմադ իբն Աբդալլահ ալ-Քալբի, Արմինիա 207, Մադինատ Առան 207 և Մուհամմադ իբն Սալլամ (կամ Սալմ), 208 (823—824)։ Մամունի կողմից նշանակվեց Արմինիայի և Ատրպատականի կառավարիչ, կռվեց Բաբեկի դեմ, բայց պարտվեց, իսկ Հայաստանում հաղթեց Սավադա Ջահհաֆիին. Yaqubi, II, 462։

83. Մուհամմադ իբն Աբդալլահ ալ-Քալբի (823)—Հիշվում է դրամի վրա. Մադան Բաջունայս 208 (823—824), իսկ այլ դրամի վրա՝ Մադինատ Առան 208, նրա հետ հիշվում են Սադակա իբն Ալի և ալ-Աբբաս իբն Խալիդ։

84. Զուրայկ իբն Ալի իբն Սադակա ալ-Ազդի (824—825)—Հիշվում է դրամի վրա. Մադինատ Առան 209 (824—825)։ Ոչինչ չկարողացավ անել Բաբեկի դեմ և շուտով հանվեց. Yaqubi, II, 463։

85. Ահմադ իբն Աբդ ալ-Ալա* (احمد, 825—826)—Հիշվում է դրամների վրա. Մադինատ Առան 209 (824—825), 210 (825—826) Ուբայդալլահ իբն Յահիայի հետ։

86. Աբդ ալ-Ալա իբն Ահմադ իբն Յազիդ ալ-Սուլամի (826)—Հիշվում է դրամի վրա. Մադինատ Առան 210 (825—826)։

87. Աբդ ալ-Ալա իբն Իբրահիմ* (826—827)—Հիշվում է դրամի վրա. Մադինատ Առան 211 (826—827) Ուբայդալլահ իբն Յահիայի հետ։

88. Մուհամմադ իբն Հումայդ ալ-Թուսի (827—828)—Վերոհիշյալ Զուրայկը (№ 84), չընդունելով իր պաշտոնանկ լինելը, ապստամբել էր։ Մուհամմադը կռվեց ու հաղթեց նրան, հետո երաշխավորագիր տվեց և ուղարկեց խալիֆայի մոտ։ Կռվեց Բաբեկի դեմ, բայց սպանվեց. Yaqubi, II, 463։

89. Աբդալլահ իբն Թահիր (829)—214 հ. թ. (829—830) սկզբին նշանակվեց Արմինիայի, Ատրպատականի ու Ջիբալի կառավարիչ. Yaqubi, III, 463։

90. Աբդ ալ-Ալա իբն Ահմադ ալ-Սուլամի *(829)—Նշանակվեց 214 հ. թ. (829—830), պայքարեց Վրաստանում Մուհամմադ իբն Ատտաբի դեմ և պարտվեց.* Yaqubi, II, *463։*

91. Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի *(829—832)—Հիշվում է դրամների վրա. Մադան Բաջունայս 212 (827—828), 213 (828—829), 214 (829—830), 216 (831—832)։ Այլ դրամների վրա նրա հետ հիշվում են՝ Իբրահիմ իբն Զայդ, Մադինատ Առան 212 (827—828), 213 (828—829). Իբրահիմ իբն Ատտաբ, Մադինատ Առան 214 (829—830)-ից մինչև 217 (832). ալ-Ասֆար, Մադինատ Առան 216 (831—832)։ Թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում ճնշեց ապստամբներին.* Yaqubi, II, *464։*

92. ԱԼ-ԱԲԲԱՍ ԻԲՆ ԱԼ-ՄԱՄՈՒՆ* *(832—834)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 217 (832), 218 (833)։ 218-ին նա կռվում էր Բյուզանդիայի դեմ.* Tabari, VIII, *631։*

93. Աբդալլահ իբն Մուսաադ (مصاد) ալ-Ասադի *(832)—Հայաստանում մի քիչ մնալուց հետո մեռավ.* Yaqubi, II, *464։*

94. Ալի իբն Աբդալլահ *(832)—Աբդալլահի մահվանից հետո Մամուն խալիֆան ոստիկան նշանակեց նրա որդուն՝ Ալիին, որի տեղ հասնելուն պես Հայաստանում խռովություն ծագեց.* Yaqubi, II, *464։*

95. Աբդ ալ-Ռահման իբն Խական *(833)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 218 (833)։*

96. ալ-Հասան իբն Ալի ալ-Բաղդիսի ալ-Մամունի *(833—835)—Հիշվում է դրամի վրա. Մադինատ Առան 220 (835) Բիշր իբն Ուրվայի հետ։ Ըստ Յակուբիի նրան նշանակեց Մամունը.* Yaqubi, II, *464, իսկ ըստ Բալազուրիի՝ նրա հաջորդ Մուտասիմ խալիֆան.* Beladsori, *211։*

97. ԱԼ-ԱՖՇԻՆ ՀԱՅԴԱՐ ԻԲՆ ՔԱՌԻՍ *(835—840)—Նշանակվեց Արմինիայի ու Ատրպատականի կառավարիչ 220 հ. թ. (835).* Tabari, IX, *11։ Պայքարեց ու հաղթեց Բաբեկին։ Մնաց մինչև 225 հ. թ. (839—840).* Tabari, IX, *104։*

98. Մուհամմադ իբն Սուլայման ալ-Ազդի ալ-Սամարկանդի *(835—837)—Աֆշինը, որն զբաղված էր Ատրպատականում, սրան նշանակեց Արմինիայի կառավարիչ։ Սրա դեմ ապստամբեցին Սահլ Սմբատյանը և ուրիշները.* Yaqubi, II, *475։*

99. Մուհամմադ իբն Խալիդ Բուխարսիուդան *(838—839)—Աֆշինը նրան նշանակեց 223 հ. թ. (837—838), որպեսզի հանդարտեցնի երկիրը և նա կռվեց ծանարների դեմ.* Yaqubi, II, *475։*

100. Ալի իբն ալ-Հուսայն իբն Սիբա ալ-Կայսի *(840)—Թույլ անձնավորություն լինելու պատճառով նրան կոչում էին յատիմ (որբ).* Yaqubi, II, *475։*

101. Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի *(841)—Մուտասիմ խալիֆան սրան նշանակեց հանձնարարելով պայքարել ապստամբների դեմ.* Yaqubi, II, *475։*

102. Ալի իբն ալ-Հուսայն *(841)—Երկրորդ անգամ նշանակվեց, բայց շուտով հեռացվեց.* Yaqubi, II, *475։*

103. Համդույա (حمدوية) իբն Ալի իբն ալ-Ֆաղլ *(842)—Մուտասիմ խալիֆայի նշանակած վերջին ոստիկանն էր Արմինիայում.* Yaqubi, II, *475։*

104. Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի *(842—845)—Ըստ Ասո-*

ղիկի (էջ 106) խալթ իպն Եզիտը նշանակվել է հայոց 290 թ. (841), իսկ Յակուբին՝ տալիս է 230 հ. թ. (844—845) և նշում, որ նա ճնշեց ապստամբներին. Yaqubi, II, 481։

105. Մուհամմադ իբն Խալիդ (845—849)—Խալիդի մահվանից հետո Արմինիայում հուզումները հաճախակի դարձան և Վասիկ խալիֆան նշանակեց նրա որդուն՝ Մուհամմադին. Yaqubi, II, 481—482։

106. ԱԲՈՒ ԱԲԴԱԼԼԱՀ ԱԼ-ՄՈՒՏԱԶԶ ԲԻԼԼԱՀ (849—862)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 239 (853—854) մինչև 247 (861—862)։ Նա դարձավ Արմինիայի և իրանական բազում նահանգների փոխարքա 235 հ. թ. (849—850). Tabari, IX, 176, 180։

107. Աբու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մաուսզի (850—851)—Հայ պատմիչների հիշած Ապուսեթն է, որը եկավ հարկերը ծանրացնելու, բայց հայ նախարարները նրան սահմանից ետ ուղարկեցին. Թովմա, 107—108։ Նշանակվել էր Մուտավաքքիլ խալիֆայի կողմից և մեկ տարի անց 236 հ. թ. Շավվալ 22-ին (28 ապրիլի 851) մահացել. Tabari, IX, 185։ Հարկերի գծով նրա տեղակալն էր Մուսա իբն Զուրարան, Թովմա, 111։

108. Յուսուֆ ալ-Մաուսզի (851—852)—Նշանակվել էր 226 հ. թ. (850—851). Tabari, IX, 186։ Գերեց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունուն և սպանվեց հայ ապստամբների ձեռքով Մուշում. Թովմա, 120։ Ըստ Յակուբիի, սպանվեց 237 հ. թ. Yaqubi, II, 489։ Թաբարին հիշում է սպանության ամիսը՝ Ռամադան 237 հ. թ. (26 փետրվարի—26 մարտի 852). Tabari, IX, 187։

109. Բուղա ալ-Քաբիր (852—855)—Նշանակվեց 237 հ. թ. Ռամադանից հետո, այսինքն՝ մոտավորապես 852 թ. գարնանը. Tabari, IX, 188։ Հայաստանում չկարողանալով ապստամբությունը վերջնականապես ճնշել, վերադարձավ Սամառա 241 հ. թ. (855—856). Beladsori, 212։

110. Իբրահիմ (856)—Թովմա Արծրունին վկայում է, որ Բուղան, հեռանալով Հայաստանից, Աբրահիմ անունով մեկին նշանակեց «Հազարապետ Հայոց և վերակացու ի վերայ հարկաց արքունի». Թովմա, 191։

111. Մուհամմադ իբն Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ (857)—Բուղայից հետո Մուտավաքքիլի կողմից նշանակվեց ոստիկան. Yaqubi, II, 490։ Սրանից հետո մի քանի տարվա անորոշություն կա։

112. Ալի իբն Յահիա ալ-Արմանի (862—863)—Հայազգի այս զորավարը նշանակվեց Արմինիայի և Ատրպատականի ոստիկան 248 հ. թ. Ռամադան ամսին (29 հոկտ.—27 նոյ. 862). Tabari, IX, 259։ Սրա օրոք Աբբասյան խալիֆան Աշոտ Բագրատունուն ճանաչեց իշխանաց իշխան։ Ալին սպանվեց Բյուզանդիայի դեմ կռվում 249 հ. թ. (863—864). Yaqubi, II, 496, Tabari, IX, 261։

113. Ալ ԱԲԲԱՍ ԻԲՆ ԱԼ-ՄՈՒՍԱԻԻՆ* (863—865)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 249 (863—864), 250 (864—865)։ Սա արդեն այն շրջանն էր, երբ Հայաստանը կիսանկախ վիճակ ուներ, և փոխարքաներն ու Արմինիայի ոստիկանները այլևս կանոնավոր չէին նշանակվում։

114. ալ-Ալա (العلاء) իբն Ահմադ ալ-Ազդի (865—866)—Հիշվում է դրամների վրա, որպես Արմինիայի ոստիկան 251 (865) և 252 հ. թ. (866). Tabari, IX, 308, 361։

115. ԱԲԴԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼ-ՄՈՒՏԱՂՂ* *(866—867)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 253 (867)։*

116. Իսա իբն ալ-Շայխ ալ-Շայբանի *(870—871)—Նշանակվեց 256 հ. թ. (869—870) հանվելով Ասորիքի կառավարչի պաշտոնից.* Tabari, IX, *475։ Ըստ Յակուբիի նա Հայաստան եկավ 257 հ. թ. Ջումադա Բ ամսին (26 ապրիլի—24 մայիսի 871).* Yaqubi, II, *508։*

117. ՋԱՖԱՐ ԱԼ-ՄՈՒՖԱՎՎԻԴ *(875—883)—Հիշվում է դրամների վրա. Արմինիա 262 (875—876), 269 (882—883)։ Փոխարքա դարձավ 261 հ. թ. Շավվալ ամսին (9 հուլիսի—6 օգոստոսի 875).* Ibn al-Athir, VI, *3։*

118. Մուհամմադ իբն Խալիդ *(878)—Թովմա Արծրունին նրան կոչում է Ահմաթ որդի Հալթի։ Ոստիկան դարձավ հայ նախարարների ցանկությամբ, բայց դավ նյութեց նրանց դեմ և Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանը վտարեց նրան, ամրապնդելով Հայաստանի անկախությունը։*

119. Իսհակ իբն Քունդաջիկ *(879)—Թաբարին վկայում է, որ 266 հ. թ. (879—880) խալիֆան պատմուճան և դրոշ ուղարկեց Իսհակ իբն Քունդաջիկին, նրան նշանակելով Դիար Ռաբիայի (Մոսուլ) և Արմինիայի կառավարիչ.* Tabari, IX, *553։*

120. Իբրահիմ* *(881)—Հիշվում է դրամի վրա. Արմինիա 268 (881—882)։*

121. Իսա իբն ալ-Շայխ—*Ըստ Դրասխանակերտցու սրա միջոցով («ի ձեռն ոստիկանին Յիսէի որդւոյն Սեխայ») հայ նախարարները ամիրապետին (Մուտամիդ խալիֆային) խնդրեցին Աշոտ Բագրատունուն թագավորեցնել. Յովհ. կաթ., 175։ Աբբասյան խալիֆան ընդունեց խնդիրքը, ուղարկեց թագ ու թանկարժեք նվերներ, և Աշոտ Բագրատունին, Հայաստանի մայրաքաղաք Բագարանում, հանդիսավորապես թագադրվեց՝ դառնալով Բագրատունյաց անկախ թագավորության առաջին թագակիրը։*

ХРОНОЛОГИЯ ОСТИКАНОВ АРМИНИИ

Доктор историч. наук А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

Для изучения истории Армении VIII—IX вв. важное значение имеет уточнение хронологии правителей (остиканов) провинции халифата Арминия, включающей в себя собственно Армению, Картли, Арран, Ширван и Дербент. Первые списки остиканов составили М. Казарян (1903) и Ж. Лоран (1919). Использование богатого нумизматического материала (арабских монет, выпущенных в провинции Арминия) дало Р. Фасмеру возможность составить более точный список (1931) остиканов Аббасидского периода. Последний, дополненный, список принадлежит А. Палбандяну (1956). Недавно Х. Мушегяном был опубликован новый нумизматический материал, благодаря которому нам удалось дополнить и уточнить хронологию правителей (остиканов) Арминии.